# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Սարչապետ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ**

| **Համայնքը** | **Միջոցառման անվանումը** | **Օրը** | **Ժամը** | **Անցկացման վայրը** |
|---|---|---|---|---|
| Սարչապետ | Ավագանու հերթական նիստ | 21.02.2020թ. | 14:00 | Սարչապետի համայնքապետարանի վարչական շենք, ավագանու նստավայր (ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, փ.1, շենք 67) |

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. փետրվարի 21-ին՝ ժամը 14.00-ին Սարչապետի համայնքապետարանի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

**գ.Սարչապետ** **13.02.2020թ.**

1. Սարչապետի համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 21-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին: (զեկ.Ա.Մարտիրոսյան)

2. Սարչապետ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան և 2019 թվականի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին: (Զեկ. Ս.Բարսեղյան)

3. Մեկ անձից գնում կատարելու թույլտվություն տալու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

4. Սարչապետ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 12-ի թիվ 17-Աորոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկ. Վ.Հազոյան)

# ՆԱԽԱԳԻԾ

---

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

---

/Զեկ. *ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Հաստատել Սարչապետ համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 21-ի թիվ 03 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1) Սարչապետ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան և 2019 թվականի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին: (Զեկ. Ս.Բարսեղյան)

2)Մեկ անձից գնում կատարելու թույլտվություն տալու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

3)Սարչապետ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 12-ի թիվ 17-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկ. Վ.Հազոյան)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

---

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

---

/Զեկ. *ՍՎԵՏԼԱՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով և 36-րդ հոդվածի գ) կետով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Հաստատել Սարչապետ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել 2019 թվականի Սարչապետ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակել azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՆԱԽԱԳԻԾ

---

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

---

/Զեկ. *ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

Առաջնորդվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույթներով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ Է.***

Թույլատրել Սարչապետի համայնքապետարանին՝ Սարչապետ համայնքի Ձորամուտ բնակավայրում գտնվող 209քմ մակերեսով շենքի, որը հետագայում վերակառուցվելու է որպես հանդիսությունների սրահ, գնումը իրականացնել մեկ անձից գնման ձևով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

---

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 12-Ի ԹԻՎ 17-Ա ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎՈԼՈԴԻԱ ՀԱԶՈՅԱՆ*

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով և 34-րդ հոդվածով`

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Սարչապետ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 12-ի <<Սարչապետ համայնքի սեփականության իրավունքով պատկանող հողամասը աճուրդային եղանակով օտարելու մասին>> թիվ 17-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն` որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ`

Աճուրդի մեկնարկային գինը սահմանել` 1քմ-ի համար 144 (մեկ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ